Արձանագրություն թիվ 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

29 հունվարի 2019թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր 15 անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Դեկանի կիսամյակային հաշվետվություն:
   /զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
2. 2018-19 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
   /զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
3. 2017-18 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսանողական հարցումների քննարկում: /զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստում նախատեսված է չորս հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2018թ. օգոստոսի քսանվեցից մինչև այսօր ֆակուլտետում իրականացված գործընթացների վերաբերյալ հաշտվետվություն՝ հիմք ընդունելով մասնաճյուղի զարգացման 2016-2020 թթ. Ռազմավարական ծրագիրը:

Մասնաճյուղում ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները, նրանց իրականացման ժամանակացույցերը՝հաշվի առնելով ընթացիկ տարվա առանձնահատկությունները:

2018-19 ուս. տարվա սկզբին ֆակուլտետն ունի 60 ուսանող(40 վճարովի, 20 անվճար): Ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով դեկանատի, ամբիոնի և ֆակուլտետի խորհուրդի նիստերի կազմակերպման ժամանակացույցերը , նրանց քննարկվող հարցերի մասին նախապես տեղեկացվում է 18 աշխատակիցներին (13 դասախոս, 5 ուսումնաօժանդակ) և ուսանողներին, իսկ կայացրած որոշումները, ինչպես նաև ստուգարքներից և քննություններից անմիջապես հետո գնահատման ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայք-էջում:

Հարկ է նշել, որ բազմաթիվ դասախոսություններ անց են կացվում նախօրոք պատրաստված էլեկտրոնային ցուցադրությունների ուղեկցությամբ, ինչը ավելի մատչելի և արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը: Մասնագիտական առարկաների համար կիրառվում են դասավանդման նոր մեթոդներ և մոտեցումներ:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում ֆակուլտետում անց են կացվում բաց դասեր՝մաստերկլաս, դասալսումներ, փոխադարձ դասալսումներ՝նախապես հաստատված գրաֆիկի համաձայն:

Ա.Շ.Մարգարյանը ընդգծեց նաև ֆակուլտետի ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությունը, որը հնարավորություն է տալիս վերհանելու բացթողումները և փնտրելու վերացնելու ուղիները:

Յուրաքանչյուր ուսումնական տարի ֆակուլտետի նյութատեխնիկական բազան համալրվում է և նոր կրթական ծրագրերի իրականացման համար ստեղծվում կամ վերազինվում նոր արվեստանոցներ և լաբարատորիաներ: Այս տարի վերազինվել է

<< Հագուստի մոդելավորում>> արվեստանոցը, << Տավուշի տուրիզմի զարգացման կենտրոնի>> հետ համատեղ ծրագրի շրջանակում , որի արդյունքում ձեռք են բերվել ժամանակակից արտասահմանյան տարբեր ֆունկցիաներ կատարող մեքենաներ, մանեկեններ, արդուկ և այլն:Խեցեգործության արվեստանոցի համար ձեռք է բերվել մեծ չափերի թրծավառարան , որի մեկուսացման համար կառուցվել է միջնապատ:

Գաղտնիք չէ , որ յուրաքանչյուր մասնագիտության կայացման , զարգացման և հաջողության գրավականը դիմորդների մեծ հոսքի ապահովումն է: Այս նպատակով ֆակուլտետի մի խումբ աշխատակիցներ պարբերաբար այցելում են մարզի հանրակրթական դպրոցներ, հանդիպում բարձր դասարանի աշակերտների հետ, լուսաբանում և ներկայացնում ֆակուլտետում իրականացվող աշխատանքները և հրավիրում մասնաճյուղ՝ տեղում ծանոթանալու կրթական ծրագրերի իրականացման պրոցեսների հետ, 2019թ. նախատեսվում է ընդունելիություն իրականացնել <<Կիրառական արվեստ>> կրթական ծրագրով,պահպանելով նաև <<Դիզայն>>-ը:

Զեկուցողը նշեց, որ 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում բոլոր կուրսերի ուսանողները <<Գծանկարչություն>> և <<Գունանկարչություն>> առարկաների շրջանակներում իրականացրել են պլեներենային աշխատանքներ՝ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները / առանց լուծարքային շրջանի / և նշեց , որ Ի-ին կիսամյակի բոլոր ստուգարքները , ընթացիկ և եզրափակիչ քննությունները անց են կացվել համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի, որին բացի մեկ ուսանողից մասնակցել են ֆակուլտետի բոլոր ուսանողները: Ա.Մարգարյանը նշեց, որ ֆակուլտետում չկան գերազանց առաջադիմության ուսանողներ, ինչը քննարկման է

արժանացել ամբիոնների նիստերին, սակայն չորս ուսանողներ ընդամենը մեկական /տարբեր առարկաներից/ կրթական մոդուլներից ստացած ցածր գնահատականի պատճառով զրկվել են վերոհիշյալ կոչումից: Քննությունների արդյունքում վեց ուսանողներ ունեցել են ակադեմիական պարտքեր: Ամենաբարձր ցուցանիշը ֆակուլտետում ունեցել է դիզայն չորրորդ կուրսը /100% /, իսկ ամենացածրը դիզայն երկրորդ կուրսը /85,7%/:

Առաջադիմությունը ըստ կուրսերի ունի հետևյալ տեսքը.

Դիզայն I կուրս /10ուսանող/ – 90% մեկ ուսանող չորս առարկայից ունի ակադեմիական պարտք

Դիզայն II կուրս /21 ուսանող/-85,71%- երեք ուսանող երեք առարկայից ունեն ակադեմիական պարտք

Դիզայն III կուրս /14 ուսանող/-92,86% մեկ ուսանող մեկ առարկայից ունի ակադեմիական պարտք

Դիզայն IV կուրս/8 ուսանող/-100%

Կիրառական արվեստ IV-րդ կուրս /7 ուսանող /-85,7% մեկ ուսանող բոլոր ութ առարկաներից ունի ակադեմիական պարտք

Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 90% ,ընդ որում անվճար համակարգում 100%, վճարովի համակարգում 65,96%: Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից: Մասնավորապես ,,Գծանկարչություն'' և ,,Գունանակրչություն''առարկաներից ստացած գնահատականները բարձր են.ինչը ավելի հավանական է, առաջադրանքների պարզության հետևանք է , այլ ոչ թե բարձր վարպետության արդյունք, իսկ ,,Նյութերի տեխնոլոգիա'', ,,Հեռանկարչություն'',<< Արվեստի պատմություն>> առարկաներից ստացել են ցածր գնահատականներ:

Ֆակուլտետում անցկացված բոլոր քննությունները և ստուգարքները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչակազմի կողմից: Այս տարի նույնպես քննությունների գնահատականները նշանակվում էին ուսանողների ներկայությամբ, ինչը դրական է ազդում օբյեկտիվության վրա, ինչու չէ հետագա ուսումնառության վրա, քանզի ուսանողներո տեղեկանում են բացթողումների և թերությունների մասին:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը:Նա ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատման արդյունքները , որը մեղմ ասած մտահոգվելու տեղիք է տալիս: Նշվեց, որ հարցը քննարկվել է ամբիոնի նիստում, որի ընթացքում ըստ հարցաշարերի մանրամասն դիտարկվել են դասախոսների գնահատականները /ընդհանրացված տեսքով/ :Առավել ուշադրություն դարձվեց ֆակուլտետի միջին /4,48/ գնահատականից ցածր /3,63/ և բարձր /5,0/ գնահատական ստացած դասախոսների խնդիրն , ինչը, ըստ ներկաների ուսանողների սուբյեկտիվ վերաբերմունքի արդյունք է /կցվում է արձանագրությանը/:

<u>Արտահայտվեցին -</u> *Հ.*Աստրյանը և Լ.Ֆլջյանը, որոնք առաջարկեցին ուսանողների նկատմամբ ցուցաբերել միանման վերաբերմունք, մշակել միանման պահանջներ՝բացառելու կողմնապահությունը և բարձրացնելու գնահատման օբյեկտիվությունը:

<u>Որոշեցին-</u> *1.*ՈՒսանողների կողմից դասավանդողների գնահատման աղյուսակները հատկացնել դասախոսներին /յուրաքանչյուրին իր գնահատականները/:

2. Դասալսումների և փորձի փոխանակման նպատակով իրականացվող փոխադարձ դասալսումների ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել ցածր գնահատական ստացած հարցերի պատճառների բացահայտման և բարձրացման ուղիների փնտրման հանցերին:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա տեղեկացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին, որոնք նշված են եղել աշխատանքային պլաններում:

Այնուհետև նշվեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների այն էսքիզները, որոնք կարժանան ամբիոնի մասնագետների բարձր գնահատականին, կազատվեն անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու հոգսից (մասնաճյուղը իր միջոցների հաշվին կտրամադրի կավ, ներկեր, թելեր և այլն) :

Վերջում դեկանի պաշտոնակատարի կողմից տրվեցին հանձնարարականներ պահանջկոտ լինել ուսանողների նկատմամբ, աշխատանքները լինեն պատշաճ մակարդակի,վերանայել առարկայական ծրագրերը, առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրթության որակի բարձրավման վրա և պլանավորել ինքնուրույն աշխատնքների ժամանակները և նրանց գնահատման չափանիշները:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Հ.Մխիթարյան